

Ա. Ռ. Ա. Կ

Աղոռնու առ Այծ .

Պարոն Աղուէսն եւ Այծ աղբար
Մէկտեղ ելան ի ճանապարհ .
Աղուէսին ինչ վարպետորդի
Ըլլալն՝ աշխարհք լաւ գիտէ .
Իսկ մէկային ինչ ըղեղի
Տէր ըլլալն՝ ո՛վ չըզգիտէ :
Համբան երկար քաշելէն
Տանջուէին ծարաւէն .
Երբոր ջրհոր մը հասան՝
Առանց չորս գին նայելու
Մէկէն ի մէկ մէջ մըտան
Անուշ անուշ խըմելու :
Մէկ մ'որ աղէկ կըշտացան՝
Նոր սիրտ , նոր ուժ ըստացան .
Կարծես երկու օր ու գիշեր
Թէ ճամբանին դեռ երկարէր ,
Ասոնք ջուրին նոր ուժով
Պիտ' երթային ապահով :
Բայց դու եկ տես ինչ արգելք
Կը խափանէ իրենց ելք :
Խոր ի գուրն են ջրհորին՝
Շատ վեր մընայ ճամբանին : —
Դարձաւ աղուէսըն դէպ ի այծ ,
Որ բանը դեռ չէր հասկըցած .
— « Իմ բարեկամս , ըսաւ , ինչպէս
» Պիտի ելնանք այս ջրհորէս .
» Միայն խմելով չիլըմըննար .
» Պէտք է տեսնել մեր ճամբուն ճար : » —
Եւ քիչ մը լուռ կենալով ,
Որպէս զի լաւ մ'այծը խաբէ ,
Վըրայ բերաւ խընտալով
Իբրեւ թէ նոր կերպ գըտեր է .
— « Միտքըս աղէկ հընարք մ'եկաւ ,
» Եթէ մըտիկ ինձ որ ընես
» Բաներնիս խիստ յաջողի լաւ ,
» Շուտով կ'ենլենք մենք ջրհորէս .

» Սա առջևի ոտքերդ վերցուր
» Ու դէպ ի պատը կըռթընցուր .
» Գլուխըդ քիչ մ'առջև ծռէ ,
» Իսկ կոտուներդ ալ վեր տընկէ :
» Ես կըռնրկէդ ճանկըռթելով
» Կոտուներուդ վըրայ կ'եննեմ
» Ու հոնկէ մէկ վեր ցատքելով
» Մէկ մ'որ ինք զինքըս դուրս նետեմ ,
» Ալ անկէ վերջ կ'ըլլայ քու բանդ ապահով՝
» Վերքաշեմ զքեզ , որ Լիցէնոր կերպով : —
Բայց եթէ ինչպէս . —
Զան՝ չըսաւ , աղուէս :
« Ահա մօրուքըս քեզ վըկայ , »
Այծը պոռաց արմըննալով՝
« Բուն խելքին դանձն է քուկին քով
» Հարտարութեանըդ չափ չըկայ :
» Քեզի շիտակ խօսք մը զրուցեմ .
» Հըլմարտութիւնն ինչո՞ւ ծածկեմ . —
» Թէ քեզի հետ չըլլայի
» Անշուշտ ես հոս մընայի : » —
Ինչ եւ իցէ շատ չըբընց
Աղուէսն հորէն զինք դուրս նետեց :
Այլ տես թէ՛ ինչ անգութ սրտով՝
Մահու բերան դայծը թողլով ,
Կըծու կըծու խօսքեր զրուցեց ,
Ու իր ճամբան առաւ քալեց : —
« Երկինքն , ըսաւ , թէ քեզի՝
» Փոխան բըրդեղ կըզակի
» Կըտոր մը խելք տուած ըլլար՝
» Մէկէն չէիր հոտ իջնար :
» Յուսանք՝ ասով խելք կը սորվիս .
» Միայն թէ ողջ հօրէն պըրծիս » :

Առակս ըլլայ օղ ակընջիդ ,
Զըրած՝ ըզվերջ մտածէ գործիդ :

ԼԱՅՈՐՆԻՆ